

հետ շփոթել թիւքմէններու ժամանակէ
Ճանկէր¹:

Այս դիտողութիւնները պէտք էին յա-
ջորդաց աւելի լուսաւորութեան համար,
մանաւանդ այն կէտին թէ հայ տարրը հնուց
ի վեր առիթ ունէր ծովիզէրքը զետեղուե-
լու, եւ ինչպէս բնական է՝ ձուլիլու եւ ձու-
լուելու այն տեղւոյ ազգաց հետ, որոնք յե-
տոյ պատմութեան մէջ աներեւոյթ կ'ըլ-
լան: Արդէն Պլինիոս կը յիշէ թէ Տրապի-
զոն ընդարձակ լեռնէ պատուած է, «որմէ
անդին Հայաստանի² եւ Մեծ Հայք» (Hist.
Nat. VI, 4 gens armenochalybes
et Maior Armenia): Խաղէ-է³ տարա-
ժուած էին հին ժամանակ մինչեւ Տայոց
մտտերը, ինչպէս կը նկարագրէ Զսենոփոն
(Արշաւ Դ. 7): Ստրաբոնի օրով՝ ինչպէս
որոշ կ'ըսէ «Որոնք այսօր Խաղաի⁴» (Χαλδαῖοι)
հին ատեն Խաղսբես (Χάλυβες) կ'անուա-
նէին. բայց իրենց գլխաւոր նիստն էր Փառնա-
կիոյ կողմը» (c. 549): Այսպէս կը նշանակէ
ուրիշ տեղեր ալ, օրինակի համար բաց ի

¹ Հմմտ. այս վերջնոյս մասին D. M. Girard,
Un coin de l'Asie Mineure. Le Djanik. Étude de
géographie et d'histoire, I—II. Ի „Muséon“, N. S.
VIII, 1907, p. 100—171.